ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ ԱՆԴԱՄՈՅ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ

37 Ապրիլի 1869 ամի, մեք 'ի նկատոյ ստորագրեալքս Անդամք Մարդասիրական Ընկերութեան Հայոց Նոր-Նախիջեւանի ժողովեալ 'ի միասին վասն վերահասու լինելոյ Ընկերութեան 1869 տարւոյն մէջ ունեցած մնացեալ եւ ծախուց հաշուոյն, գտաք նախ՝ որ ընկերութեան մատեաններըը գործադրուած են Հոգաբարձուաց խորհրդարանին ձեռք օրինաւոր եղանակաւ ըստ կարգին, և երկրորդ՝ տասն տոմսակներն առաջին նեղքին փոխառութեան 'ի գումար 1300 ռուբլեաց արծ., մի պանքական պիլէթն 'ի գումար 100 ռուբլեաց արծ. և պատրաստի գումարն 3268 ռուբլի 74 կոպ. արծ.՝ ամբողջ կը դանուին ընկերութեան գանձապահին մօտ։ Կարգաւորեցաք. նախ՝ որովհետև ըստ զօրութեան Կանոնադրութեան Ընկերութեանս տա ձեռն հարկաւոր դրամագլուխն կը կազմեն հիմնական և պատրաստական դրամագլխոց չորս մասին երեք մասն, և թէ անցեալ 1868 ամին մէջ գոյացած 'ի տարեկան բաժանորդագնոց անդամոց, կամաւոր նուիրատաց, տոկոսաց հիմնական և պատրաստական դրամագլխոց 947 ռուբլի 90 կոպ. արծ. դրամոց գումարէն ծախուկ և ժառանգաւորաց Դպրոցին և Խորհրդարանի կառավարութեան համար 499 ռ. 16 կ. արծ., ուստի առաջարկել Հոգաբարձական խորհրդարանին որ ներկայ տարւոյս մէջ նոյնպիսի ծախուց համար 'ի գործ դնել մնացեալ 211 ռ. 76 և կէս կ. արծ. և ներկայ տարւոյս մէջ գոյացեալու հիմնական և պատրաստական դրամագլխոց տոկոսաց և անդամոց բաժանորդագնոց չորս մասին երեք մասը։ Երկրորդ՝ մեծարոյ պարոնայք բժիշկ Յովհաննու Մինասեան Պէրպէրեանց, մահտեսի Պարապետի Յլիմեանց, Գէորգայ Պետրոսեանց և Յովհաննու Նաւումեան Սահրատեանց աղքատասիրական գործոնեայց և նուիրագործութեանց համար յայտնել նոցա լիուլի շնորհակալութիւն։ Երրորդ՝ համաձայն ԺԸ. յօդուածոյ Կանոնադրութեան Ընկերութեան այս կարգաւորութիւնը և 1868 ամի տարեկան հաշիւը տալ տպել վասն ընդհանուր տեղեկութեան։

(Ի վերոյ բնագրին ստորագրեալ են Անդամք Մարդասիրական Ընկերութեան վաթսուն անձինք).

Ընդ բնագրին համեմատ է. Նախագահ խորհրդարանի Ընկերութեանն ԵՊԻՓԱՆ ՊՈՊՈՅԵԱՆՑ.

Ազնուական Պարոն Պօղոս մէլիք Գարագէօզեանց Գ. Պարաբաղցի՝ յօգուտ և 'ի յառաջադիմութիւն Հայոց օրիորդաց դպրոցին Երեւանայ երկու հարիւր ռուբլի նուիրած լինելով, ըստ խնդրագրութեան բարեպաշտ Տեսչուհւոյն յիշեալ դպրոցի, և ըստ յայտարարութեան Աւժանապատիւ փոխ.— թեմական Երեւանայ, Գ. Լիհտիսա Կաթողիկոսը բարեհաճեցաւ յատուկ կոնդակ Հայրապետական օրհնութեան շնորհել փեբրուարիշեալ Ազգասէր և ուսումնասէր նուիրատուին։

Այլ թէ յիշեալ եռանդուն Հայը՝ իւր այսպիսի առատաձեռն բարերարութիւնը իւրաքանչիւր տարի շարունակելու անձկալի ուխտը կրելով, նաև մեր սիրելի Ազգայնոց ձեռնհաս մասին բարի նախանձ և յորդոր ներգործելու գիշերիկ համբաւը ստանայր։

Թ.-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ ԱԶԳԱՅԻՆ ԵՒԱՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ Ի ՏԱՃԿԱՍՏԱՆ.

"Հունկար—Իակելիսի դաշտափայրն կրէկ (Մայիսի 24 ին), Ազգային Սահմանադրութեան ինեներորդ տարեդարձին առաւել շքեղութիւն պիտի տար, եթէ անձրեւը

օղին գեղեցկութիւնն աւրելով՝ փողոցներն ու դաշտը ճահիճներու չդարձնելը։ Մայրաքաղաքիս ամէն թաղերէն խուռն բազմութիւն դիմած էր՝ ի Պէյքօղ. բայց տակաւին շողենաւէն չելած, անձրևն առնելով դէմքերը տխրեցուց։ Ինչպէս արդէն ծանուցուած էր, Ամէն. Տեղապահ Սրբազանը ժողովրդան ջերմ թախանձանաց չկրնալով դիմանալ՝ Պէյքօղ գացած էր Ս. Պատարագ մատուցանելու։ Շոգենաւներուն հասած ժամանակ անձրևն արգելք եղաւ որ կանոնաւոր թափօր մը կազմելով եկեղեցին և անկէ ալ դաշտավայրն երթայինք. տակայն որչափ որ կարելի էր հանդէսը զուարթացնելու ջանքեր եղան։ Մեծարգոյ Փանոսեան Լ.Ֆէնտին յատուկ շոգենաւ մը բռնած էր Աղապան վարժարանի աշակերտուհեաց համար, որք շոգենաւին Պէյքօղ հասած ժամանակ անմիջապէս չկրցան դուրս ելնել անձրևին պատճառաւ։ Անձրևը քիչ մը դադրած միջոցին, օրիորդները շոգենաւին մէջէն ազգային երգեր երգեցին, և խուռն բազմութիւն մ՚ալ նաւամատոյցը լցուելով աւնկեղիր եղան։ Օրիորդ մ՚ալ կարդ՝ բայց ոգեղու ճառ մը խօսեցաւ, զոր բոլոր հանդիսականք ծափահարեցին։ Յամը 6ին եան. օղը քիչ մը բացուելով բազմութիւնը նուագարաններով Հիւնքեար—Իսկէլէսի գիմեցին, ուր յետոյ Աղապան վարժարանի աշակերտուհիք ալ եկան, և առուակէն անցին ամիրիթէատրոնի պէս պատրաստած տեղ մը նստելով երգեր երգեցին։ Ամէն Տեղապահ Սրբազանն և Գեր. Գերսէս եպիսկոպոսը վրանի մը ներքև նստած էին, ուր մէկ երկու ճառեր խօսուեցան։ Գեր. Գերսէս Սրբազանն ալ բարեմաղթութիւններ ըրաւ վասն կենաց մեր Օրուան. Ս. Հայրապետին, որոյ բարձր շնորհիւ ազգերնիս իր նիւթական և բարոյական զարգացման կաշխատի։ Յետոյ Ամէն. Տեղապահ Սրբազանն աշակերտուհեաց դասուած տեղն ալ իր ներկայութեամբը պատուեց։ Յողովուրդը մեծապէս գոհութիւն կ՚յայտնէր Գորին Սրբազնութենէն՝ այս ազգային հանդէսն իր ներկայութեամբ պատուելուն համար։ Յամը 9ին միջոցները ցուրտ հով մը փչելով, ամէն մարդ ղրեթէ ակամայ բաժանուեցան Հիւնքեար—Իսկէլէսիի դաշտէն, որ ազգայնոցս սիրոյ և միութեան զգացմանց յայտարարութեան հանդիսարան մ՚եղած է, և շոգենաւները դարձան, որք քիչ մը վերջն իրենց անիւները դարձնելով իւրաքանչիւրն իրենց տեղն եւ տարին նուագարաններու և ազգային երգերու ձայներով»։

—

"Սամաթիոյ Աղապան վարժարանի աշակերտուհիները՝ թէ իրենց վայելչատիպ կերպարանքովը (ամէնն ալ միակերպ սպիտակ հագած), և թէ քաղցրանուագ երգերով երկուսն ազգային հանդիսին շուքն ուկցուցին։ Պայսերական պալատին և Բարձր. Մեծ Եպիսկոպոսին ապարանին առաջէն անցած ժամանակներն քանի մը վայրկեան կանգ առնելով բարեմաղթութեան երգեր երգեցին, որուն համար Բարձր. Մեծ—Եպիսկոպոսը յատկապէս իր պաշտօնատարներէն մէկը երկրորդաթի նաւակաւ մը շոգենաւը զրկելով գոհութիւն յայտնեց։

Յիշեալ աշակերտուհեաց վրայ տեսնուած շնորհքն ու բարեկարգութիւնը, և մանաւանդ երկուսն ազգային տօներն այս կերպով մատնակցիլն ընդհանուր գոհութեան առիթ եղաւ, որուն համար Աղապան վարժարանի անօրէնութիւնը շնորհակալեաց արժանի է»։

(Մասիս Օրաթերթ թիւ 365)

«Մեղու Հայաստանի» լրագրի 23 համարի մէջ ուրախութեամբ սրտի հետեւեալը կը կարդամ՝

"Անցեալ 18 ին եղաւ հանդիսաւոր բացումը նորահաստատ Հայ օրիորդաց ուսումնարանի յանուն սրբուհոյ Գայիանեայ։ Յաջորդ 9-ին առաւօտեան հրաւիրեալների մեծ մասը, այսինքն, մի քանի եկեղեցեաց աւագ քահանաները իրանց միսրանութեամբ և երեսփոխանութիւններով, դպրոցի խնամակալները, ուսուցիչները, աշակերտուհիք իրանց ծնողների հետ, ժողովեցան դպրոցի համար վարձած . . տանը . . .։

"Յաջորդ 10-ին Սրբազան Առաջնորդ Տաճար Էրք Եպիսկոպոսը, որոնք էր պատճառը այս դպրոցի հիմնարկութեան, բարեհաճեցաւ ինքն անձամբ ներկայ գտանվիլու կատարելու դպրոցի օրհնութեան հանդէսը։ Օրհնութիւնը կատարելից յետոյ, Նորին բարձրը Սրբազնութիւնը օրհնեց ջուրը, որով սրսկեցան բոլոր ներկայ գտնուողները։ Օրհնութիւնը վերջանալից յետոյ արժանապատիւ Տէր Յարութիւն քահանայն Սուքիասեանց և պ. Օ. Գրիգորեանցը, դպրոցի տեսուչը, կարդացին ճառեր, որոնք այստեղ հաղորդում ենք մեր յարգոյ ընթերցողներին։ Սրանից յետոյ Նորին բարձր սրբազնութիւնը արաւ համառօտ և ազդու առենախօսութիւն, որի բովանդակութիւնն էին թէ իրան դիտող պատճառները այս օրիորդական դպրոցը հաստատելու, և թէ դպրոցների նշանակութիւնը ընդհանրապէս, որոնք Նորին Բարձր Սրբազնութիւնը կոչեց եկեղեցու բեմեր, որոնցից պէտք է քարոզվի կրթութիւն և ուսումն մատաղ օրորդներին, որով սոցա մէջ ծաւալի բարեպաշտութիւն, ջերմեռանդութիւն, սէր դէպի Հայ կրօնը և եկեղեցին և ազգը, ջերմեռանդութիւն, որոնք այժմ սառած է նեստորում մեր ժողովրդոց մէջ։ Յետոյ գեղեցիկ կերպով կապեց Սրբազան առենաբանը վերոյիշեալ մոքերի հետ և սրբուհի Գայիանէի անունը, որոնք կրում է իր վերայ դպրոցը, ասելով, թէ սուրբ Գայիանէի անունն է կրում դպրոցս, Գայիանէի, որոնք եօթանասուն կուսանաց կրթող մայրն էր և կրթեց նրանց աստուածպաշտութեան և ջերմեռանդութեան մէջ, այնպէս, որ նոքա մեր Փրկչին հաստատուն եղան և եկեղեցու նահատակների շարքը մտան։ Այնպէս և այս նորահաստատ ուսումնարանը, որ կրում է յիշեալ սրբուհոյ անունը, նորա հովանաւորութեամբ և բարեխօսութեամբ Աստուծոյ առաջին, պէտք է կրթէ իրան ապաւինված Հայ օրիորդներուն ջերմեռանդութեան, պարկեշտութեան և աստուածպաշտութեան մէջ, լուսաւորելով նոցա միտքը գիտութիւններով և արհեստներով, որ նոքա ժամանակով իրրև բարի մայրեր, հայ հասարակութեան երջանկութեան և բարօրութեան պատճառ դառնան, տալով իրանց և այլոց զաւակներին բարոյական կրթութիւն։ Սրանից յետոյ Սրբազան առաջնորդը օրհնելով ամէնքին աւարտեց հանդէսը։ Ամէնքի ուրախութիւնը շատ մեծ էր, բոլորն էլ ցանկացան կատարումն Սրբազան հօր ասածներին և տարակոյս չկայ, որ այս նորահաստատ ուսումնարանը իր մէջ գործակատար անձանց ջանքով և աշխատանքով կ'ծաղկի, և առաջինը կ'լինի Թիֆլիզի մէջ ու իր հովանաւորութեան նեղքոյ կառնի և միւսներն էլ, իրրև իրան փոքրիկ քոյրերուն, խնամելով հոգալ և սոցա կարի քները։ Ներկայ գտնվողների եռանդը և ոգի որութիւնը այնքան մեծ էր, որ առանց մի խօսք անգամ ասելու շատերը իրանց կամքը բարերար ստորագրվեցան դպրոցին, այնպէս, որ այժմ արդէն բարերարաց թիւը հասաւ մինչև 36-ի։ Այս ապացուցութիւն է որ անելոյս Հայ հասարակութիւնը խնայելու չէ իր համակրութիւնը յիշեալ դպրոցի համար, որոնք միայն նորա ապագայ բարօրութեան է ծառայելու

խոհեմութեամբ, համեստութեամբ և ժամանակի պահանջմունքներին համաձայն, առանց սնափառութեան և ունայն ձևերով աչքեր շլացնելու, ինչպես սովոր են շատերը անելու, 'ի վնաս իրանց հոգացողութեան յանձնված մանկանց և ապագայում 'ի վնաս նոյն իսկ հասարակութեան„:

Մասիսի 903 թիւ շաբաթաթերթին մէջ Ս. Փրկչեան հիւանդանոցին այցելութեան կատարուած հանդիսին հետևեալ համառօտ նկարագիրը կընթեռնում:

"Հինգշաբթի օրը Ս. Փրկչեան Հիւանդանոցի այցելութեան ասնը մեծ հանդիսիւ կատարեցաւ:

Ինչպես արդէն ծանուցուած էր, Ամեն. Տեղապահ Ս. Հայրը հանդիսաւոր Պատարագ մատոյց, և յետոյ Հիւանդանոցին ամեն թաղերը պտըտելով պատասխանները մխիթարեց:

Հոգաբարձութիւնն այս մարդասիրական այցելութեան հանդիսին ազգային ասնի մը կերպարանք տուած էր: Հիւանդանոցի դուռն և ուրիշ յարմար տեղերը կանանչներով և ծաղիկներով զարդարուած էին, և յատկապես նուագարան բռնուած էր 'ի զուարճութիւն այցելուաց և պատասխանելոց: Արիւրի ջաղ հրաւիրելոց հացկերոյթ տրուեցաւ, նոյնպես և հանդէս պատասխանելոց:

Ազգային երգեր երգուեցան և ճառեր խօսուեցան զարոյի աշկերտաց կողմէն: Գեղեցիկ ճառ մ'ալ Մեծ. Տոքթոր Պարոնիկ Ս'տեփանոսեան խօսեցաւ, որ հանդիսականներուն զոհութիւն պատճառեց:

Այցելուաց թիւը 10 հազարի կը հասցնեն, որ ուրիշ տարիներ տեսնուած բան չէր, և որ պատիւ կը բերէ ազգիս մարդասիրական զգացմանց:

Հոգաբարձութիւնը բոլոր պատասխանելոց և աշակերտաց զգեստները նորոգած ըլլալով, ընդհանուր բարեկեցութիւն կը փայլէր հիւանդանոցին ամեն կողմը, գլխաւորապես հիւանդասենին մաքուր բարեկարգ և կանոնաւոր վիճակին այցելուաց ուշադրութիւնը գրաւելով գոհութեան առիթ եղած է, և շատերը բաղձանք յայտնած են որ միշտ այն վիճակին մէջ պահելու փոյթ և հոգ տարուի, և ասոր համար առատ նուէրներ տրուած է, որոց գումարը՝ լսածնուս նայելով՝ 12—13 հազար ղուրուշի* հասեր է„:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆԵՐ

ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ

Մայիս. 30 — Հին-Նախիջևանայ Յաջորդութեան Ս. Այոց Զորոց (դարալագեակ) գաւառին Ս. Ուշչիսիլակ գեղջ բնակիչ Տէր Մկրտիչ Տէր Բարսղեան Կիւլճանեանց քահանայն՝ խարդախ և ապօրինաւոր մի պատկաղրութեան, նոյնպես Արցախու (Ս. Յարարատ) վիճակին մէջ խարեբայական ժողովարարութեան համար խստատ զրկեցաւ քահանայագործութենէ:

Յուլիս 4—Ս. Սաղոմոն ընդհանուր կարգադրութեան՝ Տաթևու Ս. Անից Հոգևոր դպրոցը՝ շրջակայքը գտնուած գիւղօրէից Հայ մանկտիքը կրօնական և արտաքին դիտութեանց ուսմամբ զարգացնելու համար՝ այժմ չբաւականանալով աշակերտաց բազմութեան, Տաթևու Հ. Կաս ամարանոցի թոյլատրեցաւ կրկին երկու մեծ սենեակներ յաւելացնելու յընդարձակութիւն յիշեալ դպրոցին:

,,, 6—Ս. Փիշաղ գեղջ ծխատէր քահանայն Տէր Մարտիրոս արբահամեանին՝ հակառակ իւր արբազան պարտաւորութեան՝ խոովա-

*) Ուրն հարիւր վաթսուն բուրլիի չափ: